ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2022թվականի N 15-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱԶԻԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐՄԱՆ

ՁԵՅՆԱԼՅԱՆ ՄԱՍԻՍ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂՈՒԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՐԱԳԱԾ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԱՄ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ԼՈՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

Հավելված
Տեղ համայնքի ավագանու 2022թվականի
մարտի 10-ի N 15-Ա որոշման

Տեղ համայնքի 2021թվականի տարեկան աշխատանքային պլանի
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

/հազ. դրամ/

N/N	Ծրագրի անվանումը	Ներդրումների չափը	Ֆինանսավորման աղբյուրը	Ծանոթություն
1	Խոզնավար բնակավայրի մշակույթի տան ներսի վերանորոգման աշխատանքներ	900,0	Տեղի համայնքապետարան	
2	Քարաշեն բնակավայրի մանկական խաղահրապարակի բարեկարգում	1056,0 1225,7	ՀՀ կառավարություն Տեղի համայնքապետարան	Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ծրագիր
3	Վաղատուր բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի կապիտալ վերանորոգում	11 373,0	Տեղի համայնքապետարան	
4	Կոռնիձոր բնակավայրի մշակույթի տան տանիքի վերանորոգում	900,0	Տեղի համայնքապետարան	
5	Տեղ համայնքի Խոզնավար և Խնածախ բնակավայրերի ոռոգման ներքին ցանցի կառուցում և վերանորոգում	22627,8 12 184,2	ՀՀ կառավարություն Համայնքի բյուջե	Սուբվենցիոն ծրագիր
6	Վաղատուր բնակավայրում Խնձորի այգու հիմնում և խաղահրապարակի կառուցում	3 263,0 270,0	«ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամ Տեղի համայնքապետարան	
7	Խոզնավար բնակավայրի վարչական շենքի առաջին հարկի վերանորոգում մանկապարտեզի հիմնման համար	5000,0 4749,5 2000,0	Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանություն, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ Տեղի համայնքապետարան	
8	Քարաշեն բնակավայրի վարչական շենքի առաջին հարկի վերանորոգում մանկապարտեզի հիմնման համար	8621,1 957,9	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ Տեղի համայնքապետարան	
9	Կոռնիձոր բնակավայրի խաղահրապարակի բարեկարգում և կահավորում	3 000,0	Երևանի քաղաքապետարան	
10	Ընդամենը կատարվել է	78,128,200		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒԼՈՒՆՑ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82.1-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվություն:
Համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվությունը հաստատելու մասին» որոշման նախագիծը:
Հաշվետվության մեջ ներկայացված են Տեղ համայնքի զարգացման 2021 թվականի աշխատանքային պլանով նախատեսված և իրականացված աշխատանքների վերաբերյալ տվյալները: Ընդհանուր առմամբ 2021 թվականին իրականացված ծրագրերը, աշխատանքներն ու միջոցառումներն ուղղված են եղել Տեղ համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրով նախանշված հիմնախնդիրների լուծմանը՝ հաշվի առնելով գերակա ուղղությունները:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվությունը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվությունը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի բյուջեի եկամուտներում և բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն առաջանա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**